Արեւը մտաւ, երբ մենք հեծանք ձիերը: Ես չկարողացայ հասկանալ, թէ ի՞նչ էր պատճառը, որ Ասլանը միշտ գիշերով էր ճանապարհ գնում:

ԽԴ. ԳԻԺ ՏԷՐՏԷՐԸ ԵՒ ԲԺԻՇԿԸ

Երկրորդ աւուր առաւօտեան պահուն մենք հասանք ոչ այնքան հեռու Վանից մի հայաբնակ գիւղ: — Այստեղ, ասաց Ասլանը, պէտք է փոքր — ինչ հանգստանալ:

Ինձ շատ հաճելի էր նրա խօսքը, որովհետեւ ամբողջ գիշերը չէինք քնել, անդադար ճանապարհ էինք եկած:

Նա ձին քշեց դէպի մի տուն, որ գիւղի քահանային էր պատկանում, ես էլ հետեւեցի նրան: Քահանան յայտնի էր այս կողմերում իր մականունով՝ «դալի քեշիշ» — որ նշանակում է գիժ տէրտէր, բայց ոչ այն տեսակ գիժերից, որոնք խելք չունեն, այլ այն տեսակներից, որոնք մեր գրաբար լեզվում արտասանւում են բառերովս «խօլ» կամ «վիրագ»:

Մենք հասանք նրա տանը նոյն ժամանակներում, երբ նա, մի քանի մարդկանց իր դռան առջեւ կապած, ծեծ էր տալիս:

— Հը՛մ, տէրտէր, էլ ի՞նչ կայ, — ասաց Ասլանը նրան տեսնելով: — Դարձեալ արդարութեան գաւազանը ձեռք ես առել...

— Այս անպիտաններին պէտք է մի փոքր խրատել... — պատասխանեց նա անփոյթ կերպով եւ մօտեցաւ մեզ: — Դէ՛, ցած իջէք, Վանից նոր բերել տուած լաւ արաղ եւ գինի ունեմ:

— Բայց մինչեւ մենք կը խմենք ձեր լաւ արաղն ու գինին, դուք հրամայեցէք, որ այս «անպիտաններին» արձակեն, — ասաց Ասլանը ծիծաղելով:

— Ոչ, դուք իմ դատաստանական գործերը մի՛ խառնէք, անպիտանները պէտք է պատժուեն, — ասաց նա: — Գնանք տուն:

Յանցաւորներն երկու քրդեր էին, որոնք, ասում էր տէրտէրը, գողացել են գիւղի նախիրից երեք կովեր: Ասլանը այս ասելով, այլեւս չմիջնորդեց. մտանք տէրտէրի տունը: Նա մեզ տարաւ մի սենեակ, որ իր հիւրանոցն էր եւ միեւնոյն ժամանակ քնարանը, բայց տէրտէրը նրան կոչում էր դիւանխանայ, այսինքն, դիւանատուն:

Ես մտածում էի, թէ այնտեղ կը գտնեմ տէր Թոդիկի սենեակի նման զանազան կախարդական գրքեր կամ Այսմաւուրք. բայց մի թղթի պատառ անգամ չկար այնտեղ: Այնտեղ կային՝ նիզակներ, հրացաններ եւ զանազան տեսակ զէնքեր: